ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 191-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ /ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596 որոշումով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 29.11.2022թ. թիվ 87-Ն որոշումը և <<Հայաստանի մանուկներ>> ԲՀ -ի կողմից լիազորված անձ Արթուր Տեր-Սիմոնյանի /մուտք՝ 11.07.2023թ. թիվ 380/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Բավարարել <<Հայաստանի մանուկներ>> բարեգործական հիմնադրամի կողմից լիազորված անձ Արթուր Տեր-Սիմոնյանի դիմումը և տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ, 5-րդ փողոց, թիվ 65 հողամաս հասցեում գտնվող նոր կառուցված << Առողջության կենտրոնի Ա և Բ մասնաշենքերի>> ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):
2. Շինության ավարտական ակտ (շահագործման թույլտվություն) տրամադրելու համար համայնքապետարանի բյուջե վճարել 5000 ՀՀ դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հուլիսի 12
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 192-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. նոյեմբերի 29 -ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 87-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ և ՍՊԸ -ների հայտերը՝
Որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ և ՍՊԸ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.
1/Բեգլարյան Սոֆյա-գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/ Ղուլինյան Գոհար -գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
3/ Զաքարյան Գայանե -գ.Դսեղ 2023թ.հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
4/ Պողոսյան Էլլա -գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
5/ Հախվերդյան Արարատ -գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
6/ Ներսիսյան Արծրուն-գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
7/ Սարգսյան Լուսինե-գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
8/ Գոգինյան Արա-գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,
9/ Մուրադյան Թինա-գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Համայնքապետարանի բյուջե վճարել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հուլիսի 12
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 193-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. նոյեմբերի 29-ի և փետրվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 87-Ն և <<Թումանյան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին>> թիվ 17-Ն որոշումները և <<Կաղնի>> ՍՊԸ-ի տնօրեն Արծրուն Ներսիսյանի և ԱՁ <<Լուսինե Սարգսյան Աշոտի>> հայտերը՝

Որոշում եմ.

1.Թույլատրել ԱՁ և ՍՊԸ-ներին իրականացնել հանրային սննդի կազմակերպում.
1/Ներսիսյան Արծրուն-գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

2/ Սարգսյան Լուսինե -գ.Դսեղ 2023թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Համայնքապետարանի բյուջե վճարել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**

20 23 թ. հուլիսի 12
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 194-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31.05.2023Թ N 141-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 27.06.2023թ. Կ-27062023-06-0018 գույքի նկատմամբ (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը՝
Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի ղեկավարի 2023թ. մայիսի 31-ի «Թումանյան համայնքի Աթան գյուղում գտնվող բնակելի տան ,օժանդակ կառույցների , զբաղեցրած հողամասի,բնակելի կառուցապատման և գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ հողահատկացման հիմքերը վերականգնելու,ինքնակամ կառույցների օրինականացման և փոստային հասցե տրամադրելու մասին » N 141-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) Որոշման 12-րդ կետը փոփոխել և կարդալ հետևյալ բովանդակությամբ՝ << Հաշվի առնելով չափագրման տվյալների մուտքագրման 2023MXPWV ծածկագիրը՝ Օրինականացնել Թումանյան համայնք, գ.Աթան, 1-ին փողոց, բնակելի տուն 36 հասցեում 06-011-0023-0006 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնող, ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում չգտնվող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող և ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված ընդհանուր 75,50քմ արտաքին մակերեսով /ներքին մակերեսը՝ 69,0 քմ/բնակելի տունը և բաց պատշգամբը>>:
2) Որոշման 13-րդ կետը փոփոխել և կարդալ հետևյալ բովանդակությամբ՝ << 2015 թվականին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին վճարել 34428 /երեսունչորս հազար չորս հարյուր քսանութ / ՀՀ դրամ, օրինականացման համար սահմանված վճարների՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած>>:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հուլիսի 13
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 195-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 1-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Թումանյանի /մուտք՝ 11.07.2023թ. թիվ 382/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Բավարարել Արմեն Թումանյանի դիմումը՝ Թումանյան համայնք,գ. Դսեղ 6-րդ փողոց 34 հողամաս հասցեում ամառային խոհանոցի և զրուցարանի կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար և տալ շինարարության թույլտվություն:

2. Շինարարական աշխատանքները սկսել համայնքապետարանի կողմից տրամադրված շինարարության թույլտվության առկայության դեպքում:

3. Համայնքապետարանի բյուջե վճարել 15000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. հուլիսի 13
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 196-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂՈՒՄ ԱԼԲԵՐՏ ԱՐՏԱՇԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ՀԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով,որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Դսեղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22 ապրիլի 1991թ. N 6 որոշման արձանագրության քաղվածքները, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի անշարժ գույքի գործակալության կողմից տրված հողամասերի և շինության հատակագծերը, ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գործ N 159 (սեղանամատյան՝ 2419) և Դսեղ գյուղի բնակիչ Ալբերտ Արտաշի Խառատյանի /մուտք՝ 07.07.2023թ. թիվ 376/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Ալբերտ Արտաշի Խառատյանի /ծնված՝ 10.12.1950թ./, սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, փողոց 23, տուն 5 հասցեու 06-035-0075-0004 ծածկագրում գտնվող 71.10 քմ բնակելի տան, 12.10 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի, 31.40 քմ մակերեսով բնակելի տան նկուղի, 3.40 քմ մակերեսով բնակելի տան նկուղի բաց պատշգամբի, 28.80 քմ անասնաշենքի, 3.20 քմ անասնաշենքի բաց պատշգամբի և 0,14359 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Վերականգնել և ճանաչել Ալբերտ Արտաշի Խառատյանի /ծնված՝ 10.12.1950թ./, սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0147-0086 ծածկագրում գտնվող 0.03334 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

3. Վերականգնել և ճանաչել Ալբերտ Արտաշի Խառատյանի /ծնված՝ 10.12.1950թ./, սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0134-0027 ծածկագրում գտնվող 0.18764 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

4. Վերականգնել և ճանաչել Ալբերտ Արտաշի Խառատյանի /ծնված՝ 10.12.1950թ./, սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0136-0111 ծածկագրում գտնվող 0.25069 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

5.06-035-0075-0004 կադաստրային ծածկագրում գտնվող բնակելի տանը և հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գյուղ Դսեղ, 23-րդ փողոց,5 բնակելի տուն:

6. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

7. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

8. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հուլիսի 13
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 197-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ռոման Թորոսյանի /մուտք՝ 13.07.2023թ. թիվ 955 / զեկուցագիրը՝

Որոշում եմ.

1.Բավարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ռոման Թորոսյանի զեկուցագիրը և Լոռու մարզի,Թումանյան համայնքի,Քարինջ բնակավայրի վարչական կենտրոնի վերանորոգման աշխատանքների կատարման համար տալ շինարարության թույլտվություն:

2. Աշխատակազմի քաղաքաշինության ոլորտի մասնագետին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. հուլիսի 14
ք.Թումանյան